դապետը կարող չէ լինում գտնել եւ գերման համբորդներին ցոյց տալ Խորենացու պատմութեան ձեռագիրը: Նա չէ կարողանում պատասխանել այն հարցին եւս, թէ քանի՞ ձեռագիր ունի մատենադարանը: Ինչպէս ուրիշ շատ եւրոպացի համբորդներ, այնպէս նաեւ Վագներ այն տպաւորութիւնն է ստանում, թէ հայոց գրականութիւնը կրօնական-աստուածաբանական, մի փոքր էլ պատմական-ժամանակագրական երկերից է բաղկացած միայն:

Իր աշխատութեան նոյն այս՝ էջմիածնին նուիրուած հատուածում Վագներ մի կարճ ակնարկ է նետում հայոց եկեղեցու պատմութեան վրայ, ինչպէս նաեւ տեղեկութիւններ տալիս կաթոլիկների եւ բողոքականների քարոզութեանց մասին Հայաստանում: Առանձնապէս յիշատակում է Մխիթարի եւ Մխիթարեանների գործունէութիւնը: «Մեծ նշանակութիւն» է յատկացնում Բազէլի բողոքական միսիոնար — պաստորներ Dietrich-ի, Saremme-ի եւ Hohenacker-ի «իսկական գործունէութեանը» Շուշիում:

«Այս միսիոնարները Նոր Կտակարանը թարգմանեցին աշխարհաբար հայերէն, սակայն նրանց իրաւունք չտուին լոյս ընծայել այն, թէեւ պատրաստակամութիւն յայտնեցին թարգմանութեան ձեռագիրը էջմիածնի Սինոդին ներկայացնել ի քննութիւն: Աւետարանական միսիոնարների թւում մանաւանդ պաստոր Դիտրիխը արտակարգօրէն տիրապետում էր հայոց գրաբար եւ աշխարհաբար լեզուներին»:

Այդ միսիոնարները Շուշում դպրոց էլ են բաց արած եղել եւ յաջողութիւն գտած: Եւ սակայն, հայ հոգեւորականութեան բողոքների հետեւանքով Անդրկովկասի կառավարչապետ բարոն Ֆոն Ռոզէնը — որին Վագներ համարում է շատ թոյլ, իր կնոջ ազդեցութեան տակ գտնուող մէկը — հրամայում է միսիոնարներին անմիջապէս թողնել երկիրը եւ հեռանալ, որ եւ կատարւում է:

* * *

Այս յօդուածի առաջին գլխում արդէն յիշատակեցինք մի քանի փաստեր այն մասին, թէ Վագներ ինչ կարծիք ունի ռուս պաշտօնեաների (չինովնիկների) տխուր դերի մասին Հայաստանում:

Էջմիածին այցելած միջոցին ու ամենից առաջ յանձին տեղի գաւառապետ (պրիստավ) Իվանովի, որի հիւրն է եղել Վագներ, վերջինս կրկին դառնում է ռուս չինովնիկների բացասական տիպին:

Իվանովը ինքը խորը գոհունակութեամբ է խօսում իր եւ առհասարակ Անդրկովկասի ռուս պաշտօնեաների վիճակի մասին: Նա «խարեբայ, սրիկայ» է անուանում հակառակը պնդողներին:

«Դուք ինքներդ տեսնում էք,— ասում է նա Վագներին,— իմ տունը զուրկ չէ ոեւէ յարմարութիւնից: Սեղանս լի է բարիքներով, գոմումս էլ քսան եւ չորս նժոյգ ունիմ, բոլորն ընտիր, իշխանական ձիեր: Ու այդ ամէնի հետ միասին՝ 20,000 բնակիչներ սիրում ու յարգում են ինձ որպէս նահանգապետի փոխանորդ»:

Ու Վագներ աւելացնում է իր կողմից.

«Պ. Իվանովը ասում էր տառացի ճշմարտութիւնը»: Եւ նա նկարագրում է այդ ռուս չինովնիկի լիքը տունը, նրա փարթամ կեանքը: Եւ այդ՝ չնայած տարեկան ընդամէնը 600 ռուբլի ռոճկին: Հայ գիւղացու կաշին քերթելով են Իվանովները ստեղծել իրենց համար անկարօտ կեանք: «Մէկը նուէր էր բերում ձի, միւսը՝ ոչխար, երրորդը՝ մի խոյ, շատերը՝ կողովներով լի հաւկիթ, ուրիշներ՝ կաթ, կարագ, թխուածք եւայլն, յաճախ նաեւ՝ հնչուն դրամ»:

* * *

Վագների համբորդութեան նպատակակէտը Մասիս սարն է եղել, ինչպէս որ հեղինակը իր գրքի յառաջաբանում էլ ասում է: Եւ սակայն, ինչպէս կը տեսնէ ընթերցողը, Վագներ թէեւ այցելում է Մասիսի լանջերը մինչեւ աւերուած Ակռոի գիւղի եւ Ս. Յակոբի վանքի մօտերը, բայց նա լերան կատարը չի բարձրանում:

Այդ համբորդութեան միջոցին եւս Վագների անբաժան ուղեկիցը եւ առաջնորդը եղել է Արովեան: Նրանց տրուած է լինում նաեւ զինուորական պահակ, հրամանատարութեամբ Արսէն Գեղամովի:

Վագներ զրաղւում է առաւելապէս երկրաբանական եւ բուսաբանական հետազօտութեանց համար նիւթեր հաւաքելով: Հեղինակը ահագին թուով տեղեկութիւններ է տալիս մեզ